ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ՍՑ-ԱՄ-2018/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/7974-18 գրությամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 26.04.2018թ. թիվ 5/06.2/50761-18 և 02.05.2018թ. թիվ 5/06.2/50782-18 գրությունների հիման վրա, 04.05.2018թ. թիվ 03/26-3/7974-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ագաթագիր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Ագաթագիր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Ագաթագիր» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգին, սակայն Ընկերության հայտի փաթեթը ստորագրվել է ոչ թե տնօրեն Մարինե Աղամալյանի, այլ փոխտնօրեն Բենիամին Աղամալյանի կողմից, որը չի ունեցել նման լիազորություն: Բացի այդ, Ընկերության հայտի էլեկտրոնային ստորագրությունը ներկայացված փաստաթղթում չի արտատպվել և ցույց է տվել որպես սխալ՝ ոչ լիարժեք ստրոագրություն:

Ընկերությունը դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին և խնդրել է ուսումնասիրել «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և տալ եզրակացություն՝ նշված փաստաթղթերի պատշաճ կերպով վավերացված լինելու վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ պատասխան չի ստացվել:

Ընկերությունը գտնում է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի հայտը պետք է բավարար չգնահատվեր և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան մերժվեր «Ագաթագիր» ՍՊԸ-ի հայտը, իսկ վերոհիշյալ օրենսդրական նորմերի պահպանման արդյունքում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չէին լինի, քանի որ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության հայտը մերժելու արդյունքում չէին կարող ի հայտ գալ Պատվիրատուի կողմից արձանագրված խախտումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/49 ընթացակարգի շրջանակներում 07.05.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.04.2018թ. թիվ 5/06.2/50761-18 և 02.05.2018թ. թիվ 5/06.2/50782-18 գրություններով հայտնել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ն ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում հայտարարվել է ընտրված մասնակից և հրաժարվել է մրցույթի հետագա գործընթացից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/49 ընթացակարգի շրջանակներում 07.05.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ագաթագիր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 10:15-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2018թ.

ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.04.2018թ. գրությամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ն հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/7974-18 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 26.04.2018թ. թիվ 5/06.2/50761-18 և 02.05.2018թ. թիվ 5/06.2/50782-18 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ագաթագիր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 10:15-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգի հայտում սխալմամբ ներկայացվել են միավորի գներ՝ չափաբաժնի գների փոխարեն:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ չի կարող այդ գներով մատակարարել պահանջվող ապրանքները, հետևաբար, հրաժարվում է մասնակցել Ընթացակարգի հետագա գործընթացին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ն «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.04.2018թ. գրությամբ հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Ինչ վերաբերում է «Ագաթագիր» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ Ընկերության հայտի փաթեթը ստորագրվել է ոչ թե տնօրեն Մարինե Աղամալյանի, այլ փոխտնօրեն Բենիամին Աղամալյանի կողմից, որը չի ունեցել նման լիազորություն, և դրա հետ մեկտեղ Ընկերության հայտի էլեկտրոնային ստորագրությունը ներկայացված փաստաթղթում չի արտատպվել և ցույց է տվել որպես սխալ՝ ոչ լիարժեք ստրոագրություն, ապա գտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ ՀՀ բնապահպանության նախարարության 04.08.2018թ. թիվ 5/06.2/50596-18 հարցման հիման վրա, ՀՀ էլեկտրոնային կառավարման նախագծերի համակարգող կազմակերպություն հանդիսացող «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն համապատասխան գրությամբ հայտնել է, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով մրցույթի հայտում առկա .doc ձևաչափով ներկայացված՝ ***Հավելված 1, Հավելված 2, Հավելված 2.1, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 5 էլեկտրոնային փաստաթղթերը վավերացված են Մարինե Աղամալյանի (ՀԾՀ՝ 7309760328) էլեկտրոնային ստորագրությամբ և համարվում են պատշաճ վավերացված էլեկտրոնային փաստաթղթեր:*** Ընդ որում՝ արձանագրում եմ, ինչպես նաև Ընկերությունը չի վիճարկում, որ Մարինե Աղամալյանը հանդիսանում է «Ագաթագիր» ՍՊԸ-ի տնօրենը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ագաթագիր» ՍՊԸ-ն «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/7974-18 գրությամբ «Ագաթագիր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02562861) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ագաթագիր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ